ԼԻԲԱՆԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՁԱՆԳՎԱԾՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 1939—1945 ԹԹ.

Գ. Հ. ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆ (Լիբանան)

Լիբանանը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին դասվում էր տնտեսապես թույլ զարգացած երկրների շարքը։ Նրա տնտեսական հետամնացության հիմնական պատճառներն էին սկզբում օսմանյան տիրապետությունը, իսկ 1918 թ. հետո՝ ֆրանսիական իմպերիալիզմը, որն իր գերիշխանությունը հաստատեց Սիրիայում և Լիբանանում՝ Ազգերի Լիգայի մանդատի ներքո։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Լիբանանի ժողովրդական զանգվածների տնտեսական վիճակի հարցերը հատուկ քննության առարկա չեն դարձել։ Այդ հարցի շուրջ չկան առանձին՝ շատ թե քիչ ուշադրության արժանի, հոդվածներ։ Մինչդեռ այն գիտական որոշակի հետաքրքրություն ունի Լիբանանի ժողովրդի ազգային-ազատագրական շարժման տնտեսական նախադրյալների, ժողովրդական զանգվածների հակաիմպերիալիստական պայքարի տնտեսական դրդապատճառների բացահայտման և այսօրվա Լիբանանի տնտեսական և քաղաքական խնդիրների ճիշտ ըմբռնման ու մեկնաբանման տեսանկյունից։

Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը Լիբանանի տնտեսության մեջ տիրապետող էր ֆրանսիական կապիտալը, որի հսկողության տակ էին գտնվում արդյունաբերությունը, ֆինանսները, երկաթուղիներն ու խճուղային ճանապարհները, էլեկտրաէներգիայի արտադրությունը, բեյրութի նավահանգիստը և այլն։ Նրա դիրքերը ուժեղ էին նաև ներքին և արտաքին առևտրի, քաղաքային տնտեսության և այլ բնագավառներում։ Ֆրանսիական մանդատային իշխանությունները Լիբանանի տնտեսական զարգացումը տանում էին առաջին հերթին Ֆրանսիայի շահերին համապատասխանող ուղղությամբ։ Իրենց տիրապետության մոտ 25 տարիների ընթացքում ֆրանսիական իմպերիալիստներին հաջողվեց Լիբանանը վերածել Ֆրանսիայի հումքային կցորդի և ապրանքների վաճառահանման շուկայի։

Երկրորդ համաշխարհային պատերազմը շատ ծանր անդրադարձավ Լիբանանի տնտեսության վրա։ Այդ ընթացքում ի հայտ եկան բոլոր այն բացասական երևույթները, որոնք կապված էին Լիբանանի տնտեսությունը Ֆրանսիայից կախված լինելու փաստի հետ։

Ֆրանսիայի պատերազմի մեջ մտնելու հետևանքով Լիբանանի առջև փակվեցին Գերմանիայի ու Իտալիայի և նրանց օկուպացրած երկրների շուկաները։ Դրա հետևանքով Լիբանանը զրկվեց իր ապրանքներն այդ երկրներն արտահանելու և այնտեղից իր արդյունաբերությանն անհրաժեշտ հումք ու մեքենաներ ներմուծելու հնարավորությունից։ Դրությունն ավելի լրջացավ, երբ Ֆրանսիայի կապիտուլյացիայից և ֆաշիստական Գերմանիայի հետ համագոր-

ծակցելու վերաբերյալ վիշիական կառավարության ընդունած որոշումից[1] հետո (1940 թ. հոկտեմբերի 24) Անգլիան նույն տարվա նոյեմբերի 18-ին տընտեսական բլոկադայի ենթարկեց Սիրիան ու Լիբանանը[2]։

Ֆրանսիական մանդատային իշխանությունները պատերազմի նախօրյակին և նրա սկսվելուց անմիջապես հետո ընդունեցին մի շարք որոշումներ, որոնք ավելի ուժեղացրին Ֆրանսիայի հսկողությունը Լիբանանի տնտեսության վրա։ 1939 թ. օգոստոսի 25-ին Լևանտում ֆրանսիական իշխանություններն ընդունեցին մի որոշում, որն արգելում էր կենսական կարևորություն ունեցող ապրանքների՝ անասունների, կաթի և կաթնամթերքների, ձվի, մեղրի, կարտոֆիլի, ցորենի, սուրճի, բուսական յուղի, շաքարի, կաշվի, բրդի, բամբակի, բրնձի և այլնի արտահանումը և վերարտահանումը[3]։ Չորս օր անց ընդունվեց նոր որոշում, որով արգելվում էր նաև գինու և գարեջրի, կոշկեղենի, ավտոմեքենաների և հեծանիվների[4] արտահանումը։ Օգոստոսի 31-ին արգելվեց նաև մսի, մարգարինի ու շոկոլադի արտահանումը[5]։

Շուտով հսկողություն սահմանվեց արդյունաբերության վրա։ Ֆրանսիական մանդատային իշխանությունները 1939 թ. հոկտեմբերի 4-ին ընդունեցին մի որոշում, որով լրիվ հսկողության տակ էին դրվում Լիբանանի բոլոր այն գործարաններն ու ֆաբրիկաները, որոնց արտադրանքն անհրաժեշտ էր Ֆրանսիական բանակի կարիքները հոգալու համար[6]։

Այդ որոշումը տարածվեց Շեկկայի ցեմենտի գործարանի, Տրիպոլիում գտնվող Արիդայի տեքստիլ ֆաբրիկայի, մի շարք բրդյա գործվածքեղենի, տրիկոտաժի, մակարոնի, հրուշակեղենի ու կաշվի ֆաբրիկաների, էլեկտրաէներգիայի վրա և այլն։ Սակայն, 1940 թ. հունիսից սկսած, Ֆրանսիայի պարտությունից և կապիտուլյացիայից հետո, երբ ֆրանսիական բանակը երկրի ներսում փաստորեն դադարեց գոյություն ունենալուց, Ֆրանսիայի ռազմական պահանջները պակասեցին, որի հետևանքով կրճատվեց Լիբանանի արդյունաբերական արտադրանքի ծավալը ու նվազեց դրանում զբաղված բանվորների թիվը։

Չգտնելով էլ ավելի ուժեղացնել իրենց ազդեցությունն ու բացարձակ հսկողությունը Լիբանանի տնտեսության վրա, ֆրանսիական մանդատային իշխանությունները 1939 թ. դեկտեմբերի 3-ի որոշմամբ խիստ հսկողություն սահմանեցին վալյուտային փոխանակումների վրա[7]։ Այդ պահից սկսած՝ Սիրիայում և Լիբանանում առանց նրանց թույլտվության օտարերկրյա վալյուտայի ոչ մի փոխանակություն չէր կարող կատարվել։

Պատերազմի սկզբնական շրջանում Լիբանանի գյուղատնտեսության համար ստեղծվեցին ծանր պայմաններ։ Արտահանման և ներմուծման վրա ֆրանսիական մանդատային իշխանությունների խիստ վերահսկողությունը,

---

[1] „Documents on German Foreign Policy. 1918–1945", Series D, London, vol. XI, p. 385.

[2] „Foreign Relations of the United States. Diplomatic Papers. 1941", Washington, 1959, vol. III, p. 666.

[3] „Arrêté 178 LR. Beyrouth", 25. VIII. 1939.

[4] „Arrêté 191 LR. Beyrouth", 29. VIII. 1939.

[5] „Arrêté 196 LR. Beyrouth", 31. VIII. 1939.

[6] „Arrêté 260 LR. Beyrouth", 4. X. 1939.

[7] „Foreign Relations of the United States. Diplomatic Papers, 1940", Washington, 1958, vol. III, p. 926.

ինչպես նաև անգլիական տնտեսական բլոկադան ու արտասահմանյան շուկաների փակվելը լիբանանյան ապրանքների առջև. հասցրին այն բանին, որ լիբանանցիները դրկվեցին գյուղատնտեսական մեքենաներ, պարարտանյութեր, թունաքիմիկատներ, բարձր բերքատու սերմացուներ և այլն ներմուծելու հնարավորությունից։

Այսպիսով, երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Լիբանանում ծագեցին տնտեսական լուրջ դժվարություններ, որոնք ողջ ծանրությամբ ընկան աշխատավորական զանգվածների ուսերին։ Առևտրի, մասնավորապես ներմուծման վրա մտցված վերահսկողությունն, ինչպես նաև անգլիական տնտեսական բլոկադայի հետևանքով խիստ պակասեցին անհրաժեշտ ապրանքները և բարձրացան դրանց գները։

Ֆրանսիական իշխանությունները հարկադրված պարենավորման որոշակի նորմավորում մտցրին։ Մի կողմից արգելվեց մթերքների, մասնավորապես մսի գործածումը շաբաթվա որոշ օրերին, իսկ մյուս կողմից սահմանվեց այն մթերքների (ցորեն, շաքար և այլն) ամսական առավելագույն չափը, որ կարող էր ստանալ յուրաքանչյուր ընտանիք։ Սակայն այդ նորմաները շատ ցածր էին, իսկ վերահսկողության սիստեմը՝ վերին աստիճանի անկատար ու թույլ։ Դա լայնորեն սպեկուլյացիայի և կանոնադրական մութ գործարքների տեղիք տվեց[8]։ Այս ամենի հետևանքով պատերազմի տարիներին Լիբանանի բնակչության կենսամակարդակը խիստ ընկավ[9]։ Լիբանանյան հայտնի պատմաբան Ա. Հաուրանին ընդգծելով այդ հանգամանքը, ավելացնում է, որ «թերասնումը շատ լայն տարածում ուներ»[10]։ Բանվորի և ծառայողի աշխատավարձը չէր բավարարում ընտանիքի ամենահամեստ նյութական կարիքները հոգալուն։ Բեյրութում լույս տեսնող առաջադիմական «Ժողովրդի ձայն» օրաթերթը 1942 թ. հրատարակած «Սղությունը և բանվորներու օրավարձը» հոդվածում բերում է հետաքրքիր տվյալներ, որոնք օգնում են ճիշտ պատկերացում կազմելու աշխատավորական մասսաների տնտեսական վիճակի մասին։ Հոդվածագիրը նշում է, որ բանվորը օրական ստանում է 80—250 ղուրուշ (100 ղուրուշը հավասար է 1 լիրայի)։

Մինչդեռ 4 հոգուց բաղկացած ընտանիքի օրական նվազագույն ծախսը հետևյալն էր. 200 ղուրուշ՝ հացը, 20 ղուրուշ՝ տան վարձը, 30 ղուրուշ՝ 1 կգ. կարտոֆիլը, 40 ղուրուշ՝ 1 կգ. ձիթապտուղը, 15 ղուրուշ՝ 1 լիտր նավթը և այլն, ընդամենը 305 ղուրուշ[11]։ Ամփոփելով այս տվյալները, թերթը նշում է. «որևէ բանվոր այս սղության օրերում չի կարող այսքան համեստ ճաշի մը համար 305 ղուրուշ ծախսել։ 80—125 ղուրուշ օրականով աշխատող բանվորներու ընտանիքը գրեթե կես անոթի կպարկին»[12]։

Ի դեպ, վերևում նշված տան վարձը վերաբերում էր տարրական հարմարություններից զուրկ բնակարաններին։ Ա. Հաուրանին նշում է, որ դրանք

---

[8] „Middle East Economic Papers", Beirut, 1956, p. 93; S. Longrigg. Syria and Lebanon under French Mandate, London, 1958, p. 337.

[9] Yusif Sayigh, Lebanon: Special Economic Problems Arising from a Special Structure. „Middle East Economic Papers", Beirut, 1957, p. 86.

[10] A. Haurani, Syria and Lebanon, London, 1946, p. 91.

[11] «Ժողովրդի ձայն», 12. IX. 1942։

[12] Նույն տեղում։

Լեղից կամ աղյուսից պատրաստված խրճիթներ էին[13]։ Շատ թե քիչ հարմարավետ բնակարանների վարձը մի քանի անգամ բարձր էր։

Պարենամթերքների և արդյունաբերական ապրանքների գները բարձրանում էին աներևակայելի արագությամբ։ Այդ են վկայում հետևյալ վիճակագրական տվյալները (կիլոգրամը պիստարներով)[14]։

Տարեթիվ	միս	շաքար	րրինձ	հաց
1938	50	12	12	9
1941	115	60	30	40
1942	300	175	250	90

Ինչպես երևում է աղյուսակից, պատերազմի առաջին չորս տարիներին, նախապատերազմյան 1938 թ. համեմատությամբ, մսի գինը աճել էր 6, շաքարինը՝ 14,5, րրնձինը՝ 21, իսկ հացինը՝ 10 անգամ։ Բարձրացան նաև արդյունաբերական ապրանքների գները։ Մի զույգ բարձրորակ կոշիկը, որ 1937 թ. արժեր 4 լիբանանյան լիրա, պատերազմի վերջում վաճառվում էր 75 լիրայով, այսինքն՝ թանկացել էր 1900%-ով[15]։

Պատերազմի տարիներին, ըստ ՄԱԿ-ի տվյալների (1948=100), ապրանքների մեծածախ գների ինդեքսը 1938 թ. կազմել էր 13, իսկ 1945 թ.՝ 134, կյանքի արժեքը՝ 1938 թ. 20, իսկ 1945 թ.՝ 123[16]։

Ինչպես տեսնում ենք, ապրանքների մեծածախ գները պատերազմի տարիներին բարձրացել են 10 անգամ, իսկ կյանքի արժեքը թանկացել է 6 անգամ։ Սրանից հիմնականում տուժողը, հասկանալի է, ժողովրդական մասսաներն էին։ Դա անհանգստացնում էր Լիբանանի առաջադիմական ուժերին և առաջին հերթին կոմունիստական կուսակցությանը, որն այդ տարիներին լայն պայքար ծավալեց աշխատավորական մասսաների տնտեսական վիճակը բարելավելու ուղղությամբ։ Կոմունիստական կուսակցությունը հացի համար պայքարը հայտարարեց ամենադլխավորը տնտեսական միջոցառումների շարքում։ Կոմունիստական կուսակցության ղեկավարներից մեկը՝ Ֆարաջալլահ ալ-Հելուն 1943 թ. մայիսին նշեց, որ «ժողովուրդը պահանջում է իր հացը և այժմ պայքարում է միայն հանուն հացի»[17]։ Յուրաքանչյուր շնչի համար սահմանված հացի նորման չէր բավականացնում անգամ կես ամիս։ Դա աշխատավորական զանգվածներին հարկադրում էր հացը գնել անհամեմատ բարձր գներով։ Չպետք է մոռանալ, որ պատերազմի ժամանակ ժողովրդի սննդի երեք

---

[13] A. Hourani, նշվ. աշխ., էջ 91։

[14] „Bulletin Economique Trimestriel", Beyrouth, 1938, p. 876—880; „Rapport sur la Situation Economique de la Syrie et du Liban", 1940—1941, p. 56—61, „Rapport sur la Situation Economique de la Syrie et du Liban", 1942, p. 82—84.

[15] K. Roosevelt, Arabs, Oil and History, New York, 1949, p. 132.

[16] „United Nations. Economic Developments in the Middle East, 1945 to 1954", New York, 1955, p. 20.

[17] فرج الله الحلو خبز الشعب ايضا وايضا من هم المسؤلون عنه «كتابات مختارة» بيروت ١٩٧٤ ص ١٥

քառորդը կազմում էր հացը[18]։ Ֆարաջալլահ ալ-Հելուն Լիբանանի կոմունիստական կուսակցության անունից կառավարությանը ներկայացրեց մի ծրագիր, որի կենսագործման դեպքում հնարավոր կլիներ թեթևացնել աշխատավորների տնտեսական վիճակը։ Նա պահանջեց, որ յուրաքանչյուր մարդու ամսական հացի նորման սահմանվի 15 կգ.[19]։ Դա հնարավորություն կստեղծեր աղատվել մոնոպոլիստներից։ Մյուս կարևոր պահանջն այն էր, որ սահմանափակվեին ֆեոդալ-կալվածատերերի արտոնությունները՝ արգելվեր գների կամայականությունը։ Ստեղծված իրագրության համար Ֆարաջալլահ ալ-Հելուն մեղադրում էր ֆեոդալ-կալվածատերերին և գտնում, որ իշխանությունները պետք է ժանդարմերիայի ու ոստիկանության օգնությամբ նրանց ստիպեն հարգել օրենքները[20]։ «Եթե կալվածատերերը,— գրում էր Ֆարաջալլահ ալ-Հելուն,— մերժեն իրենց հացահատիկը հանձնել պետությանը, ապա նրանց պետք է բանա ուղարկել և այնտեղ պահել այնքան ժամանակ, մինչև որ նրանցից վերցնեն անհրաժեշտ քանակությամբ հացահատիկ»[21]։ Լիբանանի կոմունիստական կուսակցությունը նաև պահանջում էր, որ կառավարությունը գնի սննդամթերքների հիմնական տեսակները, ամբարի դրանք և վաճառի ցածր գներով[22]։

Ահա այս միջոցառումների կիրառումը կօգներ ուժեղացնելու պայքարը թանկության դեմ և որոշ չափով բարելավելու աշխատավորների նյութական պրությունը։ Սակայն Լիբանանի կառավարությունը և ֆրանսիական ու անգլիական ռազմական իշխանությունները հաշվի չառան Լիբանանի կոմկուսի առաջարկությունները, և ոչ մի վերահսկողություն չսահմանեցին սննդամթերքների վաճառքն իրենց ձեռքում կենտրոնացրած ֆեոդալ-կալվածատերերի և մոնոպոլիստական ընկերությունների գործունեության վրա։ Գները շարունակում էին մնալ շատ բարձր։ Ճիշտ է, ժողովրդական մասսաների դայրույթի և բողոքի հետևանքով լիբանանյան իշխանությունները հարկադրված էին դիմել որոշ քայլերի, սակայն դրանք խիստ սահմանափակ բնույթ էին կրում և էապես չէին կարող թեթևացնել աշխատավորության ծանր վիճակը։ Այսպես, 1943 թ. մայիսի 4-ին ընդունվեց օրենք, ըստ որի բանվորներին և ծառայողներին աշխատանքի հետ կապված պատահարների ժամանակ ստացած մարմնական վնասվածքների համար դրամական փոխհատուցում էր տրվում[23]. 1942 թ. օգոստոսի 27-ի օրենքով ցածր վարձատրվող բանվորների և առևտրականների աշխատավարձը բարձրացվեց։ Նոր օրենքով 120%-ով բարձրացվում

---

18 فرج الله الحلو بعض اسئلة «كتابات مختارة» ص ٤٢

19 Նույն տեղում, էջ 41։

20 Նույն տեղում, էջ 52։

21 Նույն տեղում, էջ 53։

22 «اقتراح الى الحكومة لاجل مكافحة الغلاء»—«صوت الشعب» بيروت ١٩٤٢/٨/٢٧

23 «مرسوم اشتراعى رقم ٢٥ صادرفى ٤ ايار سنة ١٩٤٣ «طوارئ العمل»—«مجموعة القوانين «المتعلقة بالعمل و العمال» بيروت ١٩٧٢ ص ٣٥—٥٠

էր նրանց աշխատավարձը, ովքեր ամսական ստանում էին 10 լիրա, 100%-ով՝ ամսական 11—25 լիրա ստացողներինը, 70%-ով՝ 26—50 լիրա ստացողներինը, 50%-ով՝ 51—80 լիրա ստացողներինը, 40%-ով՝ 81—100 լիրա ստացողներինը և 25-ական %-ով՝ 100 լիրայից ավելի ստացողներինը[24]։ 1943 թ. մայիսի 12-ին ընդունված օրենքով 30%-ով բարձրացվում էր աշխատողների որոշ խմբերի աշխատավարձը[25]։

Աշխատավարձերի բարձրացումը 25—120%-ով չնչին էր համեմատած ապրանքների և պարենի մեծածախ գների հետ, որոնք պատերազմի ժամանակ, ինչպես նշվեց վերևում, աճել էին 1000%-ով, իսկ առանձին ապրանքներ՝ անգամ 1900%-ով։ Պարզ է, որ ամսական 10 լիրա ստացող բանվորի աշխատավարձը անգամ 120%-ով բարձրանալուց հետո էլ չէր բավարարի նրա անգամ ամենահամեստ պահանջները։

Աշխատավորական զանգվածների նյութականին մեծ հարված հասցրեց նաև ինֆլյացիան, որը պատերազմի տարիներին չտեսնված չափերով ծաղկում էր Լիբանանում։ Ինֆլյացիայի պատճառը ապրանքների պակասն էր։ Եթե 1939 թ. Լիբանանում շրջանառության մեջ էր գտնվում 43, ապա 1945 թ. կեսերին՝ 367 մլն. լիրա[26]։

Ինֆլյացիան արժեքազրկեց բանվորների ու ծառայողների չնչին աշխատավարձը և էլ ավելի վատթարացրեց նրանց տնտեսական վիճակը։

Լիբանանի ժողովրդական զանգվածների տնտեսական վիճակը վատթարանում էր նաև երկրում կիրառվող հարկային քաղաքականության հետևանքով։ Ինչպես ճիշտ նկատել է արաբ մարքսիստ տնտեսագետ Յուսուֆ Խաթար ալ-Հելուն, հարկային քաղաքականությունը Լիբանանում «ուներ պարզորոշ արտահայտված դասակարգային բնույթ»[27]։ Դա առաջին հերթին արտահայտվում էր ուղղակի և անուղղակի հարկերի անհամամասնությամբ։ Հարկային սիստեմն այնպիսին էր, որ հարկերի մեծ մասը կազմում էին անուղղակի հարկերը, որոնք բեռը ընկած էր ժողովրդական մասսաների վրա։ 1944 թ. ուղղակի հարկերը կազմել են 5 մլն. 542 հազար լիրա, իսկ անուղղակի հարկերը՝ 20 մլն. 713 հազար լիրա[28]. այսինքն՝ անուղղակի հարկերը մոտ 4 անգամ գերազանցում էին ուղղակի հարկերը։

Ուղղակի հարկերի մեջ մտնում էին կառույցներից գանձվող հարկերը, հողային հարկը, եկամտահարկը, ժառանգության և նվիրատվության հարկը,

---

[24] «مرسوم اشتراعى رقم ٢٠٤ صادر فى ٢٧ اب سنة ١٩٤٢ تعيين الحد الادنى للاجورفى المشاريع الصناعية و التجارية»—«مجموعة القوانين ١٩٧٢» ص ٥٧—٥٨

[25] «مرسوم اشتراعى رقم ٢٩ صادر في ١٢ ايار سنة ١٩٤٣ تنظيم معدلات الاجور و احداث تعويض عن التكاليف الفعليه للعمله»—«مجموعة القوانين» ١٩٧٢ ص ٥٩—٦١

[26] S. Longringg, նշվ. աշխ., էջ 338։

[27] يوسف خطار الحلو فى الاقتصاد اللبنانى ص ٦٨

[28] R. Himadeh, The Fiscal System of Ledanon, Beirut, 1961, p. 13.

անտառահարկը և այլն[29], որոնց հիմնական վճարողները ֆեոդալ-հողատերերը, արդյունաբերողները և ունևոր խավի այլ ներկայացուցիչներն էին. այդ հարկերը խիստ ցածր էին, հանգամանք, որի վրա ուշադրություն է դարձրել նաև լիբանանյան տնտեսագետ Ռ. Հիմադեհը, օրինակ բերելով հողային հարկի ցածր չափերը։

Լիբանանի ժողովրդական մասսաների ծանր վիճակը մնաց անփոփոխ ընդհուպ մինչև պատերազմի ավարտը։ «Ժողովրդի ձայն» թերթը գրում էր. «բանվորն ու արհեստավորը հասած են վիճակի մը, ուր այլևս անտանելի է դարձած կյանքը»[30]։ Թերթը նշում էր, որ օրական 4 լիրա ստացող բանվորը ինչպես պետք է հոգա 4 հոգուց բաղկացած իր ընտանիքի նյութականը, եթե միայն 3 կգ. հացի համար նա պետք է վճարի 3 լիրա և մոտ 1 լիրա էլ տան վարձ[31]։ Այդքանն անհրաժեշտ էր միայն հացի և հարմարություններից զուրկ բնակարանի համար։ Բայց չէ՞ որ կային այլ ծախսեր՝ կապված սննդամթերքի այլ տեսակների, հագուստի, կոշիկի, բուժման, ուսման հետ և այլն։ Բացի այդ, ինչպես տեսանք, բանվորների և արհեստավորների ստվար կանգված զեռևս ամսական ստանում էր 25—100 լիրա, այսինքն՝ օրական 80 զուրուշից մինչև 3 լիրա։ Պարզ է, որ նրանց վիճակն ավելի ծանր էր։ Պատերազմի տարիներին, մանավանդ 1942 թ. սկսած, ավելի հարստացան ֆեոդալ-կալվածատերերը, որոնք ամբարել էին մեծ քանակությամբ սննդամթերքներ, գլխավորապես ցորեն և վաճառում էին շատ բարձր գներով։ Մեծապես հարստացան նաև լիբանանյան առևտրա-ֆինանսական շրջանները, որոնք օգտվեցին սպեկուլյացիաներից և զանազան մութ գործարքներից։

Այսպիսով, Լիբանանի վրա անմիջականորեն անդրադարձան պատերազմի արհավիրքները։ Դա բացատրվում է ոչ միայն նրանով, որ պատերազմի ժամանակ համաշխարհային տնտեսությունը մեծ դժվարություններ էր կրում, այլև հատկապես նրանով, որ Լիբանանը Ֆրանսիայի ենթամանդատային տարածքն էր, հումքային կցորդը և ապրանքների վաճառահանման շուկան. Ֆրանսիայի կրած ծանր փորձություններն ու պարտությունները անմիջականորեն սրում ու վատթարացնում էին Լիբանանի ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական դրությունը։

ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ НАРОДНЫХ МАСС ЛИВАНА В 1939—1945 гг.

Г. А. КАРАГУЛЯН (Ливан)

Резюме

Вследствие войны и политики французских мандатных властей резко ухудшилось экономическое положение ливанских народных масс — рабочих, крестьян и служащих. Французские власти и ливанские господ-

29 Նույն տեղում, էջ 23։

30 «Ժողովրդի ձայն», 1. I. 1946։

31 Նույն տեղում։

ствующие классы свалили всю тяжесть войны на плечи трудящихся масс Ливана. Единственной силой, выступившей в защиту интересов трудящихся масс, была ливанская Коммунистическая партия, которая выдвинула специальную программу, направленную на улучшение экономического положения народных масс. Но программа ливанских коммунистов была отвергнута.

Политическим результатом ухудшения экономического положения трудящихся Ливана явилось усиление их борьбы за свои права и завоевание политической независимости страны.